Արձանագրություն Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաների Համար

Վերջին Թարմացումները (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

4/22/21. Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները կարող են ավելացնել իրենց գործունեության իրենց առավելագույն զբաղվածության մինչև 75%-ով: Թարմացվել են մաքրման պահանջները՝ համապատասխանելու CDC-ի մաքրման թարմացված ուղեցույցին: Թարմացվել է հիվանդության հիմքով վճարովի արձակուրդային նպաստների լեզուն:

COVID-19 դեպքերի մակարդակը, հոսպիտալացումը և մահվան դեպքերը նվազել են և, կարծես, կայուն են, սակայն համայնքում վարակի տարածումը շարունակում է մնալ միջին մակարդակում: COVID-19-ը շարունակում է մեծ վտանգ առաջացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից և ձեռնարկություններից պահանջում է նախազգուշական միջոցներ ձեռնարկել և փոփոխել գործառնություններն ու գործողությունները՝ տարածման վտանգը նվազեցնելու համար:

Լոս Անջելեսի Շրջանի՝ Անվտանգ Տնտեսության Նահանգային Ծրագրի «Նարնջագույն Մակարդակ» մուտք գործելու պատճառով այս արձանագրությունը թարմացվել է՝ վերացնելու որոշ տեղական գործունեության հատուկ սահմանափակումները: Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները պետք է զգուշորեն վարվեն և պահպանեն սույն արձանագրության պահանջները՝ իրենց բիզնեսում COVID-19-ի հավանական տարածումը նվազեցնելու համար:

Այս արձանագրությունը մշակվել է՝ թույլ տալու, որ Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները, որոնք վավերացված են Կալիֆորնիա Նահանգի կողմից և գործում են Կալիֆորնիայի Սննդի և Գյուղատնտեսության Վարչության պահանջների և Կալիֆորնիայի Սննդի Մանրածախ Առևտրի Օրենքով (CRFC) սահմանված պահանջների համաձայն, գործեն այն դեպքում, երբ համապատասխանում են Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (DPH) սույն արձանագրություններին:

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները կարող են թույլ տալ, որ սննդի ժամանակավոր հաստատությունները (սննդի տաղավարները) գործեն որպես առանձին համայնքային իրադարձություն Վկայագրված Գյուղատնտեսական Շուկաների հարևանությամբ և դրանց հետ մեկտեղ՝ համաձայն Կալիֆորնիայի Սննդի Մանրածախ Առևտրի Ոլորտում նշված պահանջների:

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկան («Շուկա») և դրան հարակից համայնքային միջոցառումը պետք է ղեկավարվեն տեղանքի լիազորված պատասխանատու Կառավարչի կողմից, որը կստանձնի ողջ անձնակազմի շարունակական վերապատրաստման և զննումների, բոլոր անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ապահովման պատասխանատվությունը շուկայում առկա ընդհանուր տարածքներում, անվտանգության բոլոր միջոցառումների պահպանման վերահսկումը և ըստ անհրաժեշտության Հանրային Առողջապահության Վարչությունից տեղական գոտիավորման և քաղաքային պաշտոնյաներից հաստատումներ ստանալու համար: Այցելեք http://publichealth.lacounty.gov/eh/DSE/CommunityEvent.htm հաստատված թույլատրված Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկայում սննդի տաղավարն աշխատացնելու համար Հանրային Առողջապահության թույլտվությունը ստանալու նպատակով դիմելու համար:

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները կարող են հյուրընկալել բացօթյա կենդանի միջոցառումներ՝ համաձայն Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Ընդարձակ Վայրերի/Բացօթյա Կենդանի Միջոցառումների Արձանագրության:

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները կարող են թույլատրել բացօթյա տեղում ճաշելը՝ համաձայն Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Ռեստորանների Արձանագրության:

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները, որոնք իրականացնում են մանրածախ առևտրի գործառույթներ, պետք է համապատասխանեն Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Մանրածախ Առևտրի Հաստատությունների Ուղեցույցին:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել, լրացուցիչ տեղեկությունների կամ ռեսուրսների հասանելի դառնալու դեպքում, այնպես որ մի մոռացեք կանոնավոր կերպով ստուգել Լոս Անջելեսի Շրջանի վեբ կայքը հետևյալ հասցեով՝ http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/ սույն փաստաթղթի ցանկացած թարմացմանը տեղեկացված լինելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է.

(1) Աշխատավայրի գործելակերպը և գործունեության ծրագրերը՝ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
(2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ
(3) Վարակի վերահսկման ապահովման միջոցառումներ
(4) Աշխատակիցների կամ հանրության հետ հաղորդակցություն
(5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության ապահովման միջոցառումներ:

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաներ ստեղծելու ձեր ծրագրերը մշակելիս պետք է հաշվի առնել հետևյալ հինգ հիմնական ոլորտները:

Բոլոր Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկաները, որոնց մասին խոսվում է այս արձանագրության մեջ, պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ բիզնես-ձեռնարկության համար : Շուկայի Կառավարիչները պետք է այս արձանագրության կրկնօրինակը տրամադրեն բոլոր վաճառողներին՝ բոլոր արձանագրություններին համապատասխանությունն ապահովելու համար:

Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկա՝ _____

Հասցե՝ _____

Առավելագույն Զբաղվածությունը՝ ըստ Հրդեհային Օրենսգրքի _____

Առավելագույն Զբաղվածությունը՝ հիմնված 75% զբաղվածության վրա _____

Հաստատակության համար բաց տեղադրության մոտավոր ընդհանուր քառակուսի ոտնաչափ՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌԵԼԻ ԲՈԼՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)

❑ Բոլոր աշխատողներին (ներառյալ Շուկայի Կառավարչի անունից աշխատող աշխատակիցները կամ

Ստացված է այլեր սիրառելի չէ

կամավորները և տաղավարների համար աշխատողները) տրված է սույն արձանագրության կրկնօրինակը:

- ❑ Խոցելի աշխատողներին (65 տարեկանից բարձր անձինք, քրոնիկական առողջական խնդիրներ ունեցողներ) տրված է այնպիսի աշխատանք, որը, հնարավորության դեպքում, հնարավոր է կատարել տնից, կամ սահմանափակում է մյուսների հետ նրանց շփումը Շուկայում:
- ❑ Բոլոր աշխատակիցներին (ներառյալ կամավորները և վաճառողները, միասին՝ <<աշխատակիցներ>>) ասված է, որ հիվանդության կամ COVID-19-ով վարակված անձի հետ շփում ունենալու դեպքում չգան աշխատանքի: Աշխատակիցները հասկանում են, որ անհրաժեշտության դեպքում պետք է հետևեն DPH-ի ցուցումներին՝ ինքնամեկուսացման և կարանտինի համար: Աշխատավայրում արձանագրությունները և ծրագրերը վերանայվել և փոփոխվել են՝ ապահովելու, որպեսզի հիվանդության պատճառով տունը մնացող աշխատողները չտուգանվեն :
- ❑ Բոլոր վաճառողների և աշխատակիցների մուտքի ստուգումներն իրականացվում են նախքան նրանց Շուկա մտնելը՝ համաձայն Շրջանի Մուտքի Ստուգումների Ուղեցույցի: Ստուգումները պետք է ներառեն ստուգում՝ կապված հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության և ջերմության կամ դողէրոցքի հետ, և արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են իրականացվել հեռակա կամ անձամբ՝ աշխատակցի կամ վաճառողի ժամանման պահին: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի նաև ջերմաչափում:
  - Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
  - Դրական Ստուգում (Թույլատրված չէ):
    - Եթե անձն ամբողջովին պատվաստված է[1] COVID-19-ի դեմ և վերջին 10 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին գտնվում է կարանտին պահպանելու հրահանգների ներքո, ապա նա չի կարող մուտք գործել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահելու: Տրամադրեք նրան կարանտինի հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine.
    - Եթե անձի մոտ որսկորվում է վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ տվյալ պահին գտնվում է մեկուսացման հրահանգների ներքո, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը մեկուսանալու: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:
- ❑ Աշխատակիցներին տրամադրվում են տեղեկություններ գործատուի կամ կառավարության կողմից ֆինանսավորվող ապաձայնագրային նպաստների մասին, որից աշխատակիցը կարող է իրավասու լինել օգտվել, որը ֆինանսական ավելի կհեշտացնի տանը մնալը: Տե՛ս լրացուցիչ տեղեկությունները Կառավարության կողմից հիվանդության հիմքով արձակուրդին աջակցելու և COVID-19-ի հետևանքով աշխատանքային փոխհատուցման մասին, ներառյալ աշխատակցի հիվանդության հիմքով արձակուրդի իրավունքները՝ համաձայն 2021 COVID-19-ի Հիվանդության Հիմքով Տրամադրվող Լրացուցիչ Վճարովի Արձակուրդի մասին Օրենքի:
- ❑ Տեղեկանալուց հետո, որ մեկ կամ մի քանի վաճառողների կամ աշխատակիցների թեստի պատասխանը դրական է, կամ նրանք ունեն ախտանիշներ, որոնք համընկնում են COVID-19-ի հետ (վարակված անձ), Շուկայի Կառավարիչը ունեին ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի վարակված անձը (անձինք) մեկուսանան տանը, և պահանջի, որպեսզի աշխատավայրում վարակված անձի (անձանց) հետ շփում ունեցած բոլոր աշխատակիցներն անհապաղ ինքնամեկուսանան: Գործատուի ծրագիրը պետք է կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար նախատեսի արձանագրություն, որի միջոցով նրանք կկարողանան COVID-19-ի թեստ հանձնել՝ որոշելու համար, թե արդյոք աշխատավայրում տեղի են ունեցել վարակման լրացուցիչ դեպքեր, ինչը կարող է պահանջել COVID-19-ի հսկողության լրացուցիչ միջոցառումների իրականացում: Այն նաև պետք է ներառի ծրագիր, թե ինչպես կարելի է տեղեկացնել այլ

Վանցարան՝ ամբողջ միասնություն

[1] Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, եթե անցել է 2 (երկու) շաբաթ կամ ավել ժամանակ 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո (օր.՝ Pfizer-BioNTech կամ Moderna) կամ անցել է 2 շաբաթ կամ ավել մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց հետո (օր.՝ Johnson and Johnson [J&J]/Janssen):

Կասեցված է այլևս ուժի մեջ չէ

վաճառողներին վարակման մասին:: Տե՛ս հանրային առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ի Արձագանքը:](#)

- ❑ Այն դեպքում, եթե 14 օրվա ընթացքում աշխատավայրում հայտնաբերվի COVID-19-ով վարակման երեք կամ ավելի դեպք, գործատուն պետք է այդ բռնկման մասին հաղորդի Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ հեռախոսահամարներով (888) 397 -3993 կամ (213) 240-7821 կամ առցանց www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում հայտնաբերվի խմբակային վարակման դեպք, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը նախաձեռնելու է խմբակային վարակման դեպքին արձագանք, որը ներառում է վարակների վերահսկման ուղեցույցների և առաջարկությունների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքի հատուկ վերահսկման միջոցառումներ: Հանրային Առողջապահության Գործերի Կառավարիչը կզբաղվի խմբակային վարակման դեպքի քննությամբ օգնելով ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Բոլոր վաճառողներին և աշխատակիցներին, որոնք շփում ունեն այլ անձանց հետ, պետք է տրամադրել անվճար դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս LAC DPH COVID-19-ի Դիմակների կայքէջը http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks: Վաճառողը և բոլոր աշխատակիցները պարտավոր են ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում կրել դիմակը, երբ շփվում են կամ հնարավոր է շփում ունենան այլոց հետ: Այն վաճառողները և աշխատակիցները, որոնց բժիշկը խորհուրդ է տվել չկրել դիմակ, պետք է ներքևի եզրին ամրացված վարագույրով դեմքի վահան կրեն, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, քանի դեռ նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականով դիմակներ <u>չպետք է</u> կիրառվեն:
- ❑ Աշխատողներին պետք է տրամադրել հրահանգներ դիմակները պատշաճ կերպով օգտագործելու վերաբերյալ, ներառյալ ամեն օր իրենց դիմակները լվանալու կամ փոխելու անհրաժեշտությունը:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերը, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում:
- ❑ Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
  - ○ Նշելով առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը,
  - ○ Փոփոխելով ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
  - ○ Սեղանները դնելով առնվազն ութ ոտնաչափ հեռավորության վրա և ապահովելով նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնելով կամ ժապավեններ փակցնելով զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնելով հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորելով այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Հնարավորության դեպքում հովանոցներով և նստարաններով ընդմիջման բացօթյա տարածքներ են ստեղծված, որոնք կօգնեն ապահովել ֆիզիկական հեռավորությունը: Աշխատավարձի և ժամային կանոնակարգերի համաձայն ընդմիջումները բաշխված են, այնպես, որ ապահովեն աշխատողների միջև ընդմիջման սենյակներում մշտապես վեց (6) ոտնաչափ հեռավորության պահպանումը:
- ❑ Վաճառողների բոլոր տաղավարները և վաճառողների տաղավարների մեջ բոլոր առևտրի կայանները առանձնացված են առնվազն վեց ոտնաչափով: Ընդմիջման սենյակները, զուգարանները և ընդհանուր օգտագործման մյուս տարածքները աշխատանքային ժամերին ախտահանվում են ստորև ներկայացված հաճախականությամբ, սակայն ոչ պակաս, քան օրական մեկ անգամ, հետևյալ ժամանակացույցով
  - ○ Ընդմիջման սենյակներ ______________________________
  - ○ Զուգարաններ ______________________________
  - ○ Այլ ______________________________
- ❑ Ախտահանիչները և նմանատիպ նյութերը վաճառողների և աշխատողների համար հասանելի են

հետևյալ վայր(եր)ում.

_____

- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր վաճառողների և աշխատողների համար հետևյալ վայր(եր) ում:

_____

- ❑ Աշխատակիցներին թույլատրված է հաճախակի ընդմիջումներ վերցնել ձեռքերը լվանալու համար:
- ❑ Յուրաքանչյուր աշխատողի հատկացված է իր սեփական գործիքները, սարքավորումները և սահմանված աշխատանքային տարածքը: Հնարավորության դեպքում նվազագույնի է հասցված ձեռքով համատեղ օգտագործվող իրերի կիրառումը (օր. հեռախոսներ, պլանշետներ, դյուրակիր համակարգիչներ, սեղաններ, գրիչներ և այլն):
- ❑ Այս ստուգաթերթում նկարագրված բոլոր ծրագրերը՝ բացի զբաղվածության պայմաններին վերաբերող ծրագրից, կիրառվում են առաքման անձնակազմի և ցանկացած այլ ընկերությունների նկատմամբ, որոնք կարող են գտնվել տարածքում՝ որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի՝ Նկարագրել այլ միջոցառումներ.

_____

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Հավաստագրված Գյուղատնտեսական Շուկան անց է կացվում դրսում (Բացօթյա տարածքում) : Հավաստագրված գյուղատնտեսական շուկաներում առավելագույն զբաղվածությունը սահմանափակվում է, որպեսզի թույլ տա աշխատողներին, վաճառողներին և հաճախորդներին պահպանել 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն իրենց ընտանիքի անդամ չհանդիսացող անձանցից: Հավաստագրված գյուղատնտեսական շուկաները խրախուսվում են շարունակել սահմանափակել իրենց զբաղվածությունը բացօթյա Շուկայի զբաղվածության 75%-ի չափով:
  - Շուկայում հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է_____-ով:
- ❑ Շուկայի Կառավարիչը պետք է ապահովի, որ վաճառողներին (և՛ սննդամթերքի, և՛ մանրածախ վաճառողներին) հատկացված տարածքը հնարավորություն տա նրանց ընդարձակ տարածք ունենալ՝ սեղաններ, հովանոցներ և այլ գույքեղեկեր տեղադրելու համար՝ համապատասխանելով ֆիզիկական հեռավորության պահանջներին:
- ❑ Վրաններ կամ հովանոցներ կարող են օգտագործվել այն պայմանով, որ վրանները կամ հովանոցները համապատասխանեն Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության Բացօթյա Բիզնեսների Գործունեության Ժամանակավոր Կառույցների Կիրառման պարտադիր ուղեցույցին: Բացառություն են կազմում սննդի տաղավարները՝ հիմնված CRFC-ում նշված պահանջների վրա:
- ❑ Աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե մեկից ավելի մուտքեր կան), որոնք ունեն համապատասխան դիմակ, կանգնած են մուտքի մոտ, բայց մոտակա հաճախորդներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա՝ հաճախորդներին ուղղորդելու և Շուկայի զբաղվածությանը հետևելու համար:
- ❑ Մտածեք սահմանափակ ժամանակով մուտքի կամ ամրագրման համակարգի ներդրման մասին՝ առավելագույն զբաղվածության հասնելու վտանգը նվազեցնելու համար: Եթե Շուկան հասնի առավելագույն զբաղվածության, հաճախորդներին կարող է թույլատրվել հերթագրվել, ինչպես հաստատված է տեղական օրենքներով, եթե տարածքը թույլ է տալիս, բայց նրանց պետք է հրահանգել, որ հերթում սպասելիս միմյանցից 6-ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանեն:
- ❑ Ժապավենները կամ այլ նշանները սահմանում են ինչպես ելակետային վայրը Շուկա ժամանող հաճախորդների համար, այնպես էլ 6-ոտնաչափ միջակայքերը հաջորդ հաճախորդների համար, որոնք սպասում են շարքին մուտք գործելու համար:
- ❑ Իրականացվել են առնվազն վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ՝ վաճառողների և հաճախորդների միջև ֆիզիկական հեռավորությունը ապահովելու համար:
  - Տաղավարների շարքերի միջանցքները բավականաչափ լայն են երկու ուղղություններով շարժն ապահովելու համար, կամ հստակորեն նախատեսված են միայն որպես միակողմանի տաղավարներ:
  - Տաղավարները տեղադրված են այնպես, որ մեկից ավելի հաճախորդներ հնարավորություն ունենան տաղավարում լինել միևնույն ժամանակ միմյանցից 6-ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելով:

Վաղեցված է այլևս չիրականացվում

- ○ Վաճառողներին կարգադրված է տեղադրել իրենց տաղավարներն այնպես, որ աշխատակիցները հնարավորություն ունենան հաճախորդներից 6-ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել: Այն տարածքներում, որտեղ 6-ոտնաչափ հեռավորություն հնարավոր չէ պահպանել (օր. դրամարկղում), տեղադրված են ստվերային ծածկոցներ ինչպիսին է օրգանական ապակին: Տե՛ս հանրային առողջապահության ուղեցույցը [միջնապատերի](#) վերաբերյալ: Սա կարող է ներառել ֆիզիկական միջնապատերի կամ տեսողական ազդանշանների օգտագործում (օր. հատակի գծանշումներ, գունավոր ժապավեն կամ նշաններ աշխատողների և հաճախորդների կանգնելու վայրը նշելու համար):

- ❑ Դիտարկեք վաճառողների ժամանումը կազմակերպելու գործը, նախքան միջոցառումը, որպեսզի վաճառողներն ապահովեն ֆիզիկական հեռավորությունը և տեղադրեն իրենց տաղավարները:
- ❑ Վաճառողներին հորդորված է հնարավորինս մնալ իրենց տաղավարներում Շուկայի ընթացքում և խուսափել ուրիշների հետ հավաքվելուց:
- ❑ Տեղում սննդի սպառումը թույլատրվում է միայն բացօթյա ճաշելու տարածքի համար հատուկ սահմանված վայրերում, որը ֆիզիկապես հեռու է գործունեություն իրականացնող մյուս վայրերից: Հաճախորդներին պետք է հիշեցնել, որ ուտել և խմել թույլատրվում է միայն Շուկայի տարածքում հատուկ նախատեսված ճաշելու վայրերում: Արգելվում է ուտել/խմել տարածքի ցանկացած այլ վայրում:
  - ○ Տարբեր սեղանների շուրջ նստած հաճախորդների միջև առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար սեղանները պետք է տեղադրված լինեն իրարից առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորության վրա չափվելով մեկ սեղանի աթոռի մեջքի հատվածից հարակից սեղանի աթոռի մեջքի հատվածը:
  - ○ Սեղանի շուրջ նստած միևնույն խնջույքի անդամների թիվը սահմանափակվում է 6 անձերով:
  - ○ Բացօթյա ճաշելու համար օգտագործվող ժամանակավոր կառույցները պետք է համապատասխանեն Նահանգի բացօթյա կառույցների չափանիշներին՝ ինչպես սահմանված է [Արտաքին Բիզնես-Գործունեության Համար Օգտագործվող Ժամանակավոր Կառույցների](#) մասին Կալիֆորնիայի Առողջապահության Վարչության պարտադիր ուղեցույցում:
- ❑ Հանրային նստատեղերը (օր.՝ աթոռներ, նստարաններ և այլ հասարակական տարածքներ) ձևափոխվում են՝ աջակցելու ֆիզիկական հեռավորության պահպանմանը:
- ❑ Կենդանի ժամանցային միջոցառումները թույլատրվում են միայն բացօթյա տարածքում: Առնվազն 12 ոտնաչափ հեռավորություն ստեղծելու համար անհրաժեշտ է տեսանելի սահմանազատում նստած հաճախորդների խմբերի և բեմի կամ ելույթ ունեցող անձի միջև: Ելույթ ունեցող անձինք պետք է հնարավորինս օգտվեն խոսափողերից, որպեսզի կարողանան սահմանափակել ձայնային ելուստները (պրոյեկցիաներ), որոնք պատճառ են հանդիսանում ավելի շատ մասնիկների, աերոզոլների և կաթիլների արտանետման և ավելի հեռու տարածման:
  - ○ Արգելվում է հաճախորդների պարելը: Բոլոր ներկայացումների ընթացքում հաճախորդների խմբերը պետք է հնարավորինս նստած մնան:
  - ○ Կենդանի ժամանցային միջոցառումը դիտող հաճախորդները պետք է միմյանցից ֆիզիկապես հեռու գտնվեն առնվազն 6 ոտնաչափով և պետք է կրեն դիմակներ: Հաճախորդներին չի թույլատրվում ուտել և խմել բացօթյա կենդանի միջոցառումը դիտելիս, եթե նստած չեն ճաշելու համար նախատեսված վայրում:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Շուկայի ողջ տարածքում հասանելի են կայաններ՝ հաճախորդներին հնարավորություն տալու օգտագործել պատշաճ ախտահանիչ պարագաներ, այդ թվում՝ առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց, անձեռոցիկներ և աղբամաններ:
- ❑ Մշակվել է բարձր շփման մակերեսների և մուտքի տարածքների մաքրման և ախտահանման ծրագիր և այն հետևյալն է
  - ○ Ընդհանուր վայրերը և հաճախակի դիպչման ենթակա առարկաները՝ կապված հաճախորդի կողմից մոտենալ-վերցնելու և վճարման հետ (օր. սեղաններ, կրեդիտ քարտերի ընթերցիչներ), աշխատանքային ժամերին ախտահանվում են օրական առնվազն մեկ անգամ EPA-ի կողմից հաստատված ախտահանիչների օգտագործմամբ:
  - ○ Ավելացրեք մաքրումը և ախտահանումը բարձր շփման վայրերի մակերեսների և դիմակ չկրող անձանց ազդեցությանը ենթարկվող մակերեսների համար:

Սաստեցված է՝ այլևս արդիական չէ

Կասեցված է՝ այլևս ուժի մեջ չէ

- ❑ Հաճախորդներին հանձնարարված է, որ շուկայում գտնվելու ընթացքում մշտապես կրեն դիմակ: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկան և բարձր երեխաներին: Այն անձինք, որոնց իրենց բժշկական մատակարարը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ներքևի եզրին շղարշով, որպեսզի համապատասխանեն Նահանգային հրահանգներին, քանի դեռ նրանց վիճակը դա թույլ է տալիս: Կզակի տակ տեղադրված շղարշը նախընտրելի է: Միակողմանի փականներով դիմակները չպետք է օգտագործվեն: Ձեր աշխատակիցների և այլ հաճախորդների անվտանգությունն ապահովելու համար պետք է դիմակները մատչելի դարձնել այն հաճախորդների համար, ովքեր ժամանում են առանց դիմակ:
  - ○ Հաճախորդները կարող են հանել իրենց դիմակը, միայն երբ ուտում/խմում են բացօթյա տարածքում ճաշելու համար նախատեսված վայրում:
  - ○ Ցանկացած սնունդ ուտելիս կամ ըմպելիք խմելիս հաճախորդները պետք է նստած լինեն: Ուտելիս կամ խմելիս հաճախորդները չեն կարող շրջել կամ կանգնած լինել:
  - ○ Այն հաճախորդներին, ովքեր կհրաժարվեն կրել դիմակ, կարող է մերժվել ծառայությունների տրամադրումը և նրանցից կպահանջվի լքել տարածքը:
- ❑ Ախտանիշների ստուգումն իրականացվում է նախքան այցելուների հաստատություն մուտք գործելը՝ համաձայն Լոս Անջելեսի Շրջանի DPH-ի [Մուտքի Ստուգումների Ուղեցույցի](): Ստուգումները պետք է ներառեն ստուգում՝ կապված հազի, շնչարգելության, դժվարացված շնչառության, ջերմության կամ դողէրոցքի հետ, ինչպես նաև հարցում, թե արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարելի է անել անձամբ կամ այլընտրանքային մեթոդների միջոցով՝ ինչպիսիք են առցանց ստուգման համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [ցուցանակների]() միջոցով, որոնց վրա պետք է նշվի, որ տվյալ ախտանիշներն ունեցող այցելուները չպետք է մուտք գործեն տվյալ տարածք:
  - ○ Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
  - ○ Դրական Ստուգում (Թույլատրված չէ):
    - ▪ Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել տարածք, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ [ph.lacounty.gov/covidquarantine]():
    - ▪ Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների տակ, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ [ph.lacounty.gov/covidisolation]():
- ❑ Երեխաների հետ Շուկա ժամանող հաճախորդները պետք է ապահովեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն որևէ այլ անձի կամ իրենց չպատկանող իրի դիպչելուց, և կրեն դեմքի ծածկոցներ, եթե տարիքը թույլ է տալիս:
- ❑ Գործում են առանց հպման վճարային համակարգեր կամ, եթե դա հնարավոր չէ, վճարային համակարգերը պարբերաբար ախտահանվում են:
- ❑ Բացօթյա զուգարաններն ու ձեռքի լվացման կայանները ապահովված են ձեռքի օճառով, թղթե սրբիչներով և անհպում աղբակղերով: Բացօթյա հասարակական զուգարանները պարբերաբար ստուգվում, մաքրվում և ախտահանվում են օրական առնվազն մեկ անգամ կամ ավելի հաճախ՝ ըստ անհրաժեշտության՝ օգտագործելով EPA-ի կողմից հաստատված ախտահանիչները:
- ❑ Հասարակական խմելու ջրի շատրվանները անջատված են և ունեն ցուցանակներ, տեղեկացնելով հաճախորդներին այն մասին, որ շատրվանները չեն գործում:
- ❑ Հաճախորդները հեշտությամբ հասանելիություն ունեն պատշաճ ախտահանիչ միջոցներին՝ ներառյալ

ձեռքի ախտահանիչ միջոցները, անձեռոցները և աղբամանները Շուկայի ողջ տարածքում: Տաղավարների վաճառողները իրենց տաղավարներում տրամադրում են ձեռքերի ախտահանման կայան, եթե թույլ են տալիս հաճախորդներին ձեռք տալ իրենց արտադրանքին:

- ❑ Երեխաների խաղահրապարակները, գործունեության գոտիները կամ այլ հարմարությունները (օր.՝ արձակուրդային լուսանկարներ) չեն թույլատրվում:
- ❑ Ընտրովի - Նկարագրել այլ միջոցառումներ (օր.՝ միայն տարեցների համար ժամեր տրամադրելը, առցանց պատվիրելու/գալ վերցնելու ծառայության խրախուսումը, ոչ պիկ վաճառքի խթանումը).

_____

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ❑ Կալիֆորնիայի Սննդի Մանրածախ Առևտրի Օրենքով (CRFC) նախատեսված սննդամթերքի անվտանգության բոլոր փորձերը և պահանջները հետևվում և պահպանվում են:
- ❑ Ճաշելու բացօթյա տարածքները կարող են բաց լինել՝ համաձայն DPH-ի Ռեստորանների Արձանագրության: Սննդի վաճառակետերը կարող են ալկոհոլ վաճառել միայն այն դեպքում, երբ այն գնում են նույն գործարքով, ինչ սնունդը:
- ❑ Մաքրել և ախտահանել սպասքն ու սարքավորումները CRFC-ով սահմանված պահանջվող հաճախականությամբ:
- ❑ Հավատարիմ մնալ աշխատողների առողջության և հիգիենայի պրակտիկային. Հիվանդ լինելու ժամանակ չպետք է աշխատել. հաճախակի լվանալ ձեռքերը. ձեռնոցները օգտագործել՝ ինչպես պահանջվում է CRFC-ով:
- ❑ Համոզվել, որ ամբողջ սնունդն ու սննդի բաղադրիչները սննդի հաստատված աղբյուրից են:
- ❑ Սննդամթերքը պատրաստող աշխատակիցներին չի խրախուսվում հերթափոխի ընթացքում փոխել կամ մուտք գործել այլոց աշխատանքային կայաններ:
- ❑ Չփաթեթավորված սննդից որևէ նմուշառում չի թույլատրվում:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Սույն Արձանագրության կամ Շուկայի թողարկած Լոս Անջելեսի Շրջանի COVID-19 Անվտանգության Համապատասխանության Վկայագրի կրկնօրինակը փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերում: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի անվտանգության համապատասխանության ինքնավկայագրման ծրագիրն ավարտելու համար այցելեք http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm: Հաստատությունները, տեղում՝ հաստատությունում, պետք է պահեն Արձանագրությունների պատճենը՝ ըստ պահանջի:
- ❑ Ցուցանակները փակցված են Շուկայի և յուրաքանչյուր տաղավարի մուտքի մոտ, ինչը հաճախորդներին հիշեցնում է վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելու, դիմակ մշտապես կրելու անհրաժեշտության, կանոնավոր ձեռքի լվացման կարևորության և տանը մնալու անհրաժեշտության մասին, եթե հիվանդ են կամ ունեն COVID-19-ի ախտանիշներ: Տե՛ս Շրջանի DPH COVID-19-ի Ուղեցույցի էջերը լրացուցիչ ռեսուրսների և բիզնեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար:
- ❑ Փակցված են ցուցանակներ, որոնք անհատներին հիշեցնում են, որ Շուկայում գտնվելիս չի թույլատրվում ուտել կամ խմել՝ բացառությամբ նշանակված բացօթյա ճաշասրահի:
- ❑ Ամբողջ Շուկայում ցուցանակները հաճախորդներին ցույց են տալիս, թե որտեղ կարելի է գտնել ձեռքի ախտահանման մոտակա դիսպանսերը:
- ❑ Շուկայի համար առցանց գովազդները (կայքէջ, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) հստակ տեղեկատվություն են տրամադրում շուկայի ժամերի, դիմակներ կրելու պահանջի, սահմանափակ զբաղվածության, նախնական պատվերի, ամրագրումների, կանխավճարների, տեղափոխման և/կամ

Վավերացված է՝ ալեն Սիրուսեի Է

առաքման հետ կապված ծրագրերի և այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՋԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Ծառայությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն այցելուների/հաճախորդների համար, առաջնահերթություն են ստացել:
- ❑ Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, եղել են առցանց:
- ❑ Ձեռնարկված են միջոցառումներ՝ ապահովելու համար ապրանքների և ծառայությունների մատչելիությունը այն հաճախորդների համար, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ ենթակա են բարձր ռիսկի հանրային տարածքներում:

Վերը չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք ձեռնարկությունը պետք է կցի սույն փաստաթղթին:

Այս արձանագրության վերաբերյալ ցանկացած հարցերի կամ մեկնաբանությունների դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Ձեռնարկության Կոնտակտային Անուն՝ _____

Հեռախոսահամար՝ _____

Վերջին Վերանայման Ամսաթիվը՝ _____

Կասեցված է՝ այլևս վավեր չէ